ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի

17 դեկտեմբերի 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի դեկտեմբերի 17-ին, ժամը 16:30-ին Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Վեդի, Թումանյան 6), տեղի ունեցան ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեի ընդունման վերաբերյալ հանրային լսումներ:

Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի ավագանու «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության անդամներ, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ:

Հրավիրված հանրային լսումները վարում էր Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանը

Հանրային լսումների ընթացքը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հրաչյա Ստեփանյանը

1.Հանրային լսման օրակարգի թեման էր՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» համայնքի ավագանու որոշման նախագծի

Համայնքի ղեկավարի կողմից առաջարկված Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Վեդի համայնքի ղեկավար պրն. Գարիկ Սարգսյանը, ով ողջունելով հանրային լսման մասնակիցներին առանձնահատուկ կարևորեց հանրային լսումների միջոցով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ապահովելու անհրաժեշտությունը:

Աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանը ներկայացնելով հանրային լսման թեման, նշեց, որ հանրային լսման վերաբերյալ հանրային իրազեկումը կատարվել է նախապես՝ ինչպես համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղեկատվություն հրապարակելու, այնպես էլ՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին ուղարկված շրջաբերականի միջոցով, որի հիման վրա բնակավայրերում կատարվել է հանրության իրազեկում:

Մինչև բյուջետային ուղերձով հանդես գալը համայնքի ղեկավարը նշեց, որ մինչև հանրային լսումը բյուջեի նախագիծը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննություն իրականացնելու համար, որի արդյունքները կներկայացվեն ավագանու նիստին: Նշեց, որ ներկայացված նախագիծը դեռևս նախնական է և լրամշակելուց հետո կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:

Համայնքի ղեկավարը հանդես եկավ բյուջետային ուղերձով՝ նշելով, որ համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից ու միջոցների խնայողական օգտագործումից:

2025 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի

արդյունավետությունը, անշարժ գույքի և փոխադրամիջոցների գույքահարկի հարկման բազաների ճշգրտման արդյունքում բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով համայնքի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները, ակնկալել եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում, իրականացնել մշակութային և երիտասարդական միջոցառումներ, աշխուժացնել համայնքի բնակիչների առօրյա կյանքը, իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը, կապիտալ ներդրումներ կատարել համայնքի կազմում ընդգրկված նախադպրոցական և արտադպրոցական կրթության, մշակույթի ոլորտներում, բնակարանային- կոմունալ տնտեսությանն բնագավառներում, ինչպես նաև կառուցման կամ հիմնանորոգման միջոցով բարելավել ճանապարհային տնտեսության վիճակը:

Համայնքի 2025 թվականի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը և զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Համայնքի ղեկավարի ուղերձից հետո Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ Անդրանիկ Ավետիսյանը և հայտնեց, որ բյուջեի եկամուտները պլանավորելիս հիմք են հանդիսացել բնակավայրերի նախորդ տարիների փաստացի հավաքագրված եկամուտների հանրագումարը:

Ա.Ավետիսյանը նշեց, որ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով Վեդի համայնքի 2025-2027 թվականների զարգացման ծրագիրը, 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերը՝ առաջնորդվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով: Որոշման նախագծի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է **3842000.0 հազար դրամ**, դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ:

1.Բյուջեի եկամուտների կանխատեսում

Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեի վարչական մասի կանխատեսված եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 2842000,0 հազար դրամ, գերազանցելով նախորդ տարվա պլանավորված բյուջեն 14.2 %-ով, որը կազմում է 353000.0 հազար դրամ: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 842666,2հազար դրամ, գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 6,4%-ով, որը կազմում է 50921,0 հազար դրամ:

Վարչական մասի եկամուտները առաջանում են հետևյալ եկամտատեսակներից:

ա/ Հարկեր և տուրքեր – 594368,2 հազ. դրամ

բ/ Պաշտոնական դրամաշնորհներ /դոտաց. և սուբվենց./ - 1999333,8 հազար դրամ

գ/ Պատվիրակված լիազորություններ - 3998.0 հազար դրամ

դ/ Այլ եկամուտներ - 244300.0 հազար դրամ

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նախատեսվել է 569000,0 հազ դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 20%-ը՝ ապահովելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի պահանջները:

Ֆոնդային մասի եկամուտների կանխատեսում

Վեդի համայնքի 2025 թվականի բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է **1000000.0 հազ. դրամ,**

1/ Օտարումից մուտքեր - 1000**000.0 հազ. դրամ,**

2. Բյուջեի ծախսերի կանխատեսում

Վեդի համայնքի 2025թ. բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ծավալը ծրագրվել է **3842000.0** հազար դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 74 %-ը կամ 284200.0 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 1000000.0 հազար դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին (ֆոնդային բյուջե):

Վարչական մասի ծախսեր

1/ պետական կառավարման ապարատի պահպանման ընթացիկ ծախսերի ֆինանսավորում – 568450,0 հազ. դրամ,

2/ Բնակարանային կոմունալ տնտեսության կողմից կատարվող ծառայությունների և աշխատանքների ծախսերի ֆինանսավորում –390000,0 հազ. դրամ,

3/ Նախադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում -658000.0 հազ. դրամ,

4/ Արտադպրոցական կրթության ոլորտի գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում -230000.0 հազ. դրամ,

5/ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ֆինանսավորում - 48000.0 հազ. դրամ,

6/ միջոցառումների կազմակերպման և անցկացման ծախսերի ֆինանսավորում - 30900.0 հազ. դրամ,

7/ հանգստի և սպորտի ծառայությունների ֆինանսավորում- 30000.0 հազ. դրամ,

8/ մշակույթի տների գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում – 69000.0 հազ. դրամ,

9/ գրադարանների գործունեության ընթացիկ ծախսերի ֆինանսավորում – 34900.0 հազ. դրամ,

10/ սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ֆինանսավորում - 43000.0 հազ. դրամ,

11/ փողոցների լուսավորության ապահովման համար ֆինանսավորում - 86750.0 հազար դրամ,

12/ ճանապարհների հարթեցման և փոսային նորոգումների համար ֆինանսավորում - 18000.0 հազար դրամ

13/ ջրային կառույցների պահպանման համար ֆինանսավորում - 32000.0 հազար դրամ,

14/ ընդհանուր բնույթի և աշխատանքի հետ կապված ծառայությունների համար ֆինանսավորում - 20200.0 հազար դրամ

15/ շրջակա միջավայրի պահպանման համար ֆինանսավորում -12500.0 հազար դրամ

16/ ոռոգման ոլորտի համար ֆինանսավորում - 300.0հազար դրամ:

17/ առողջապահության ոլորտի համար ֆինանսավորում – 1000.0 հազ. դրամ,

Նշված ոլորտներում ծախսերը կանխատեսվել են հաշվի առնելով վերջին տարիների փաստացի ցուցանիշները և 2025թ. տարեկան աշխատանքային ծրագրերը:

Բյուջեի վարչական մասի ծախսերը կազմում են 2273000,0հազար դրամ:

Բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման նպատակով համայնքում ծրագրվել են կատարելու հետևյալ կապիտալ աշխատանքները

Ֆոնդային մասի ծախսեր

1/ ճանապարհների ասֆալտապատում - 354000.0 հազար դրամ,

2/ Ոռոգման ցանցի կառուցում - 243000.0 հազար դրամ,

3/ Տանիքների նորոգում - 56000.0 հազար դրամ,

4/ կոյուղագծի անցկացում - 1000.0 հազար դրամ,

5/ փողոցային լուսավորության անցկացում - 1500.0 հազար դրամ,

6/ խմելու ջրագծերի անցկացում - 10000.0 հազար դրամ,

7/ գազաֆիկացում - 10000.0 հազար դրամ,

8/ մանկապարտեզների կառուցում և վերանորոգում - 261500.0 հազար դրամ,

9/ բնակարանային շինարարություն/էներգոարդյունավետություն/ - 6000.0 հազար դրամ,

10/ Հուշարձանների վերանորոգում - 30000.0 հազար դրամ,

11/ վարչական շենքերի վերանորոգում - 4000.0 հազար դրամ,

12/ Վարչական սարքավորումների ձեռքբերում - 6000.0 հազար դրամ:

13/ այլ սարքավորումների ձեռքբերում - 17000.0 հազար դրամ:

Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար Ֆոնդային բյուջեով նախատեսված ընդհանուր գումարը կազմում է 1000000.0 հազար դրամ:

Ա.Ավետիսյանի զեկույցի ավարտից հետո աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ.Բաքոյանը հարց բարձրացրեց, թե ինչի վրա են ծախսվելու բյուջեի վարչական մասի 15-րդ կետով նախատեսված ֆինանսական միջոցները, որին ի պատասխան Ա.Ավետիսյանը հայտնեց, որ ծախսվելու են կանաչապատման նպատակով համապատասխան ծառատեսակներ ձեռք բերելու, ինչպես նաև շների ստերջացման աշխատանքների նպատակով համապատասխան ծառայություններ ձեռք բերելու համար:

Համայնքի ղեկավարը հարցրեց, թե 2025թ-ի ֆինասնական գլխավոր փաստաթղթում ներառված են արդյոք եկող տարվա համար պլանավորվող մանկապարտեզների և նոր խմբերի բացման համար նախատեսված ծախսերը, որին ի պատասխան Ա.Ավետիսյանը հայտնեց, որ այո, նշված ծախսերը նախատեսված են ներկայացված բյուջեի նախագծում:

Ամփոփելով հանրային լսումը, համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց հանրային լսման մասնակիցներին և հորդորեց ակտիվ լինել նման հանրային միջոցառումների մասնակցությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

17.12.2024թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	Տեղեկանքի վերնագիրը	ՏԵՂԵԿԱՆՔ **ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
2.	Հանրությանը իրավական ակտի կամ համայնքային հարցի նախագծի վերաբերյալ իրազեկումը	**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** նախաձեռնված քննարկման մասին տեղեկատվությունը նախապես տեղադրվել է համայնքապետարանի պաշտոնական կայքում /www.vedicity.am/՝ 02.12.2024թ-ին:
3.	Հանրային քննարկումների մասնակիցները	Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի ավագանու «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» խմբակցության անդամներ, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ:
4.	Հանրային քննարկումներին մասնակցության արդյունքները	Մասնակիցները դրական գնահատեցին Վեդի համայնքի 2025թ-ի բյուջեի նախագիծը:
5.	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	-

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ձև 1

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկման դրված ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ նախագծի վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/հ	Առարկության և (կամ) առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը և համարը	Առարկության և (կամ) առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ) առաջարկության վերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1.	-	-	-	-
2.	-	-	-	-
3.	-	-	-	-
4.	...			
5.	...			

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Հ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ

ք.Վեդի

17.12.2024թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	[illegible]
2.	[illegible]	[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	[illegible]
4.	[illegible]	[illegible]	[illegible]
5.	[illegible]	[illegible]	[illegible]
6.	[illegible]	[illegible]	[illegible]
7.		ՉՈՒԿ	
8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.	[illegible]	[illegible]	[illegible]
12.	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]
15.	[illegible]	[illegible]	[illegible]
16.	[illegible]	[illegible]	[illegible]
17.	[illegible]	[illegible]	[illegible]
18.	[illegible]	[illegible]	[illegible]
19.	[illegible]	[illegible]	[illegible]
20.	[illegible]	[illegible]	[illegible]
21.	[illegible]	[illegible]	[illegible]
22.	[illegible]	[illegible]	[illegible]
23.	[illegible]	[illegible]	[illegible]

24.	[illegible]	«[illegible]» [illegible]	
25.	[illegible]	«[illegible]» [illegible]	
26.	[illegible]	«[illegible]» [illegible]	
27.	[illegible]	«[illegible]» [illegible]	
28.	[illegible]	[illegible]	
29.	[illegible]	«[illegible]» [illegible]	
30.	[illegible]	[illegible]	
31.	[illegible]	[illegible]	
32.	[illegible]	[illegible]	
33.	[illegible]	[illegible]	
34.	[illegible]	[illegible]	
35.	[illegible]	[illegible]	
36.	[illegible]	[illegible]	
37.	[illegible]	[illegible]	
38.	[illegible]	[illegible]	
39.	[illegible]	[illegible]	
40.	[illegible]	«[illegible]» [illegible]	
41.			
42.			
43.			
44.			
45.			
46.			
47.			
48.			
49.			
50.			
51.			
52.			